



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Ապրիլ 26, 1990

Հոգեշնորհ
Տ. Շնորհք Ծ. Վրդ. Գասպարեան
Հովի Ա. Շողակաթ Եկեղեցույ
Նախագահ Ծխական Խորհուրդի
ՊԷԼՎԻ.

Սիրելի հայր Սուրբ,

Ստացումս է Առաջնորդ Սրբազան Հօր ուղղում Փետրուար 21, 1990 թուակիր ձեր
նամակը:

Այս նամակով կը տեղեկացնեք թե Դեկտեմբեր 7-ին, 1989, տեղի ունեցած է համայնքի
Տարեկան Անդամական Ժողովը, եւ այդ առթիւ ընտրուած են նաեւ Ծխական Խորհուրդի վեց
անդամները: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրեք նորընտիր անդամներու
վաւերացումը:

Այս գրութեամբ կը փափաքիմ տեղեկացնել որ կը վաւերացուի Ծխական Խորհուրդի
հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

- Լէն Մուրատեան
- Փիթըր Մերգեան
- Չարլի Մերգեան
- Ալեքս Բեդրոսեան
- Հրանդ Նորսիկեան
- Հէնրի Ներսէսեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի
անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթեմ առողջութիւն եւ ձեր բոլորին եկեղեցանուէր
աշխատանքներուն յաջողութիւն:

Աղօթակից

Խաժակ Վրդ. Պարսամեան

Խաժակ Վրդ. Պարսամեան
Առաջնորդի Փոխանորդ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the Armenian Church of America, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Թի 458
Ապրիլ 4, 1991

Հոգեշնորհ
Տ. Շնորհք Ծ. Վրդ. Գասպարեան
Հովի Ա. Շողակաթ Եկեղեցույ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Պէլվիլ.

Սիրելի Հայր Շնորհք,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Փետրուար 12, 1991 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 3, 1991-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդին երեք անդամներ: Կու տաք բուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Հրանդ Նորսիկեան Կրտ.
Տէյվիտ Մատթէոսեան
Մէյն Մատթէոսեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ Անդամական Ժողովին ներկայացուած Հոգեւոր Հովիտին տեղեկագիրը Հովիտին ստորագրութիւնը պէտք է կրէ, իսկ Ծխական Խորհուրդի տեղեկագիրը պէտք է ստորագրուի Հովիտին, Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը: Մեր մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ

Ս. ՇՈՂԱԿԱԹ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ


ԵԿԵՂԵՑԻ

Հովիտ՝ Տ. ՇՆՈՐՀԻՔ Ծ. ՎՐԴ. ԳԱՍՍԱՊԵՏԱՆ

Holy Shoghagat

ARMENIAN APOSTOLIC CHURCH

400 HUNTWOOD ROAD + BELLEVILLE, ILLINOIS 62221 + 618-277-6400



VERY REV. SHNORK KASPARIAN, PASTOR

Ապրիլ 28, 1991

Բարձրաշնորհ
Տ. Խաժակ Ա. ՇԱՍ. Պարսամբան
Բարեխնամ Առջնորդ Հայոց
Ամերիկայի Արեւելեան Թեմին,
Նիւ Եորք.

Գերաշնորհ Արքայազան Հայր,

Ծնորհակալութեամբ տեսցած ենք Ապրիլ 4, 1991 թուակիր Ձեր նամակը, որով կը վաւերացնէք մեր Միական Խորհուրդի նոր անդամներու ընտրութիւնը: Այժմ կուգամ տեղեկացնելու Ձերդ Արքայանութեան մեր նորընտիր Միական Խորհուրդի դիւանը որ կազմուեցաւ հետեւեալ անձերով.

Հրանդ Նարսիկեան Կրտ. Ատենապետ.
Ջարլի Մէրզեան, փոխ Ատենապետ.
Ճէյն Մատթէոսեան, Գանձապահ.
Տէյվիտ Մատթէոսեան, Քարտուղար.

Խորհրդականներ, Լէն Մուրատեան,
Փիթըր Մէրզեան, եւ Հրանդ Նարսիկեան Երց.
Ալէքս Բեթրոսեան ու Հէնրի Ներսէսեան.

3205 Bradley St. Granite City Il.62040
Tel.618-8777638.

Բաց ի քարտուղարէն, որուն հասցէն այժմ կուտանք, միւս բոլոր անդամներուն հասցէները արդէն նախօրօք տրուած են ու կը մնան անփոփոխ:


Ձայս հաղորդելով Ձերդ Արքայանութեան ու խնդրելով Ձեր օրհնութիւնը, մնամք խորին յարգանքօք ի համբոյր Ձեր Ա. Աջին:

Ծնորհք Տ. Վրդ. Գասպարեան
Հոգեւոր Հովիւ

RECEIVED MAY 10 1991

Ս. ՇՈՂԱԿԱԹ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Հովիտ՝ Տ. Շնորհք Ծ. Վրդ. Գասպարեան



Holy Shoghagat

ARMENIAN APOSTOLIC CHURCH

400 HUNTWOOD ROAD + BELLEVILLE, ILLINOIS 62221 + 618-277-6400

VERY REV. SHNORK KASPARIAN, PASTOR

12 Փետրուար, 1991.

Բարձրաշնորհ
Տ. Խաժակ Ս. Եպս. Պարսաման
Բարեխնամ Առաջնորդ Հայոց
Ամերիկայի Արեւելեան Թեմին,
նիւ Եորթ.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Փետրուար 8, 1991, Կիրակի կէս օրէ յետոյ ժամը 1-ին տեղի ունեցաւ Ծուխիս Տարեկան Ընդհանուր Անդամական Ժողովը. նաեւ կատարուցաւ Ծխական Խորհուրդի Երեք նոր անդամներու ընտրութիւնը, զոր ներկայիւս կուգամ հաղորդելու արդիւնքը Ձերդ Սրբազանութեան:

Հրանդ Նորսիկեան, Կրտսեր - 24 քուէ.
Տէյվիտ Մատթէոսեան - 24 քուէ.
Ճէյն Մատթէոսեան - 28 քուէ.

Ուստի, զայս հաղորդելով, կը խնդրենք Ձերդ Սրբազանութեանն որ բարեհաճէիք վաւերացնել զանոնք որպէսզի կարենան օրինաւոր կերպով լծուիլ իրենձ պաշտօններուն:

Կանխայայտ շնորհակալութեամբ եւ խորին յարգանօք, մնամ,


Ձերդ՝

Շնորհք Ծ. Վրդ. Գասպարեան
Հոգեւոր Հովիւ

Holy Shoghagat

ARMENIAN APOSTOLIC CHURCH

400 HUNTWOOD ROAD + BELLEVILLE, ILLINOIS 62221 + 618-277-6400



VERY REV. SHNORK KASPARIAN

Օգոստոս 21, 1991

Բարձրաշնորհ
Տ. Խաժակ Ս. Եպս. Պարսամբան
Առաջնորդ Ամերիկայի Հայոց
Արեւելեան Թեմին
Նիւ Եորք.

Գերաշնորհ Արքայան Հայր,

Սուրբ Շողակաթ եկեղեցւոյ Հովիւն ու Միականները
իրենց խորին շնորհակալութիւնները կ'ուզեն յայտնել Ձերդ
Արքայութեան, պատմական ու յիշատակելի օր մը ապրած ըլլալուն
համար՝ շնորհիւ Ձեր այցելութեան, Ս. Աստուածածնայ Վերափոխման
տօնին առթիւ:

Ձեր հովուապետական այս առաջին այցելութիւնը որպէս
նորընտիր Առաջնորդը Թեմին, մեր փոքրիկ Մուխին միխթարութեան,
քաջալերութեան եւ ներշնչումի պատուական առիթ մը եղաւ: Ձեր
այցելութիւնը անմոռանալի պիտի մնայ մեր Միականներուն մտքին
մէջ մանաւանդ այն գորովական արտայայտութեան համար զոր ցուցա-
բերեցիք նուիրելով Աւետում-ի սրբանկար մը, պատրաստուած Մայր
Հայրենիքի մէջ:

Նոյնպէս գոտեպնդիչ ու ոգեւորիչ առիթ մը շնորհեցիք
նուաստիս, որպէս Հոգեւոր Հովիւը այս համեստ Մուխին, նուիրելով
շատ սիրուն արծաթեայ ձեռաց խաչ մը, որուն համար սրտագին
շնորհակալութիւններս կը յայտնեմ:

Այս առթիւ հանեցէք ընդունիլ մեր բոլորին բարեմաղթու-
թիւնները Ձեր կեանքի քաջառողջութեան եւ Աստուածահաճոյ գործոց
յաջողութեան համար:

Խորին յարգանք եւ Աջահամբուրիւ, Ձերդ՝

Շնորհք Ս. Վրդ. Գասպարեան
Հոգեւոր Հովիւ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

BISHOP KHAJAG BARSAMIAN, PRIMATE

Թի 1016
Յուլիս 17, 1992

Գերաշնորհ
Տ. Ներսէս Արք. Պողոսպալեան
Դիւանապետ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
Էջմիածին.

Սիրելի Սրբազան,

Ստացած ենք Յունիս 23, 1992 թուակիր ձեր նամակը՝ Հրանդ Օսիպովի ներկայացուցած
խնդրանքին կապակցութեամբ:

Ձեր նամակին բովանդակութիւնը հաղորդեցինք Սէյնթ Լուիզ քաղաքի մօտիկ շրջանին մէջ
հովուական պաշտօն վարող Հոգ. Տ. Ծնորհք Ծ. Վրդ. Գասպարեանի, թելադրելով որ
հետաքրքրուի յիշեալ հարցով եւ մեզի հաղորդէ իր ստացած տեղեկութիւնները:

Երբ Հայր Ծնորդէն իմանանք այս մասին՝ ձեզի կը տեղեկացնենք:

Աղօթակից

Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

BISHOP KHAJAG BARSAMIAN, PRIMATE

Թի 861
Ապրիլ 20, 1992

Հոգեշնորհ
Տ. Շնորհք Ծ. Վրդ. Գասպարեան
Հովի Ա. Շողակաթ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
ՊԷԼՎԻ.

Սիրելի Հայր Շնորհք,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Ապրիլ 7, 1992 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 9, 1992-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդին երկու անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Սուզան Նորսիկեան-Գրեյսըր
Ծոն Պաղտասարեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ համաձայն Կանոնադրութեան՝ Անդամական Ժողովի դիւանի եւ այլ ընտրութիւնները պէտք է ըլլան երկպատիկ ցանկի մը վրայէն եւ գաղտնի քուէարկութեամբ: Զեր տեղեկագիրներուն մէջ չգտանք քուէաթուղթի օրինակը:

Կօրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը: Մեր մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ